

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
02 փետրվարի 2021թ.-ին կնքված N «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՅԾԲ-21/1-1» ծածկագրով
Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման
պետական գնման պայմանագրի

ք. Երևան

«03» փետրվարի 2021թ.

Վարչապետի աշխատակազմ, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լին Սեբուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Թովմասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով N ՎԱ-ՍԱՏՄ-ԳՅԾԲ-21/1-1 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, ինչպես նաև ՀՀ Կառավարության 04.05.17թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով, որ 2021թ. պետական բյուջեով հատկացվել է համապատասխան ֆինանսական միջոցներ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցը և Վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N1-ի և հավելված N2-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2021թ.-ի փետրվարի 02-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2021թ.-ի դեկտեմբերի 31-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖԼ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024065
Հ/Հ 02505554



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Լին Սեբուրիթի Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Ասորի թաղ 5, շտաբ 5
«Էվոկարանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660011285930100
Հ/Հ 00484087



Հավելված N 1
«02» փետրվարի 2021թ. կնքված
«ԿԱՍԱՏԱ-ԳՅԾԶԲ-21/1-1» ծածկագրով պայմանագրի
«03» փետրվարի 2021թ. կնքված N 1 Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ՉԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերի սահման չափաբա ժի համարը	գնումների պլանով նախատեսվա ծ միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ՉԱՍԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	մատուցման		
					ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	9811120/50 1	Անվտանգության ծառայություններ՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2 շենքի համարը (այսուհետ՝ տարածք) Ք. Երևան, Կոմիտասի 49/2 շենքի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1842.7 քմ: Անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա պահնորդական ծառայություն՝ առանց հանգստյան և տոնական օրերի: Աշխատակիցները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում և ապահովված լինեն ծառայությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով: Պահպանության ենթակա պահակալների աշխատակիցները (Պահնորդներ) պետք է ապահովվեն լինեն հետևյալ միջոցներով՝ ձեռքի դուրակի քապեր, դերասուսի, ռետինե մահակ, մետաղական ձեռնաշղթա, որոնց համար պետք է անցած լինեն համապատասխան դասընթացներ և ունենան վկայական: Կատարող ընկերությունը պարտավորվում է պահպանության ենթակա բոլոր պահնորդներին ապահովել համապատասխան արտահագուստով (ամառ, աշուն-ձմեռ), որոնց վրա անկա է իր տարբերակը: Ք. Երևան, Կոմիտասի 49/2 շենքի տարածքի անվտանգության ծառայությունը պետք է իրականացվի 24 ժամյա ռեժիմով ամենազվ 1 պահնորդի ներկայությամբ պարտադիր է, ըստ որում՝ ▶ Իրականացնել հերթապահություն /ներառյալ տեսահսկման և համակարգերի միջոցով/, ▶ իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն, ▶ կանխել նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը, ▶ արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն): ▶ Արգելել կողմնակի անձանց մուտքը, ▶ այցելուներին տրամադրել մեկանգամյա անցագրային թերթիկներ՝ ընդունողի բանավոր թույլտվության, ▶ մուտքը թույլատրել աշխատակիցների և ունկնդիրների համար կազմված անվտանգության, ▶ իրականացնել Պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության և պահակային կանոններ, ▶ բալ թույլատրել մուտք գործել միայն աշխատակիցների ավտոմեքենաներին, ամենօրյա շրջայն կառավարել շենքի ներսում՝ աշխատանքի ավարտից հետո: ▶ ապահովել անվտանգության աշխատանքի անվտանգությունը, ▶ ապահովել գիշերային հերթապահության աշխատանքների և օպերատիվ իրավիճակի վերահսկումը /ներառյալ տեսահսկման համակարգերի միջոցով/:	դրամ	3 839 000	1	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 49/2	2021 թվականի փետրվարի 02-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ծամը 00:00:

